ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Հայկուհի Կամենդատյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
ք.Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2024 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.
Զարգացման ֆրանսիական գործակալություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
«Կլիմայի խնդիրների ինտեգրումը և հանրային ֆինանսների ու ֆինանսական հատվածի կառավարման հզորացումը Հայաստանում» թեմայով ուումնական այցին մասնակցություն (հնարավորություն ընձեռել ձեռք բերել գործնական գիտելիքներ բնապահպանական խնդիրները բյուջետային քաղաքականության մեջ ներառելու մեխանիզմների վերաբերյալ)

5. Քննարկված թեմաները

ա/ Կանաչ բյուջեի կազմման գործընթաց և հաշվետվության կառուցվածք,
բ/ Կանաչ պարտատոմսերի թողարկումների կառուցվածք և կառավարում,
գ/ Պետական և մասնավոր ներդրողների կողմից ֆինանսավորվող կանաչ ծրագրերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցելության ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ «Զարգացման ֆրանսիական գործակալության», Կանաչ բյուջեի աշխատանքային խմբի՝ Ֆրանսիայի ֆինանսների նախարարության, Էկոլոգիական պլանավորման գլխավոր քարտուղարության, Ֆինանսական գլխավոր տեսչության, Ազգային աուդիտորական դատարանի, Կլիմայի տնտեսագիտության ինստիտուտի, «France Trésor» գործակալության և «Պատասխանատու ֆինանսական դերակատարներ» ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են, թե ինչպես է Ֆրանսիան ինտեգրել բնապահպանական չափանիշները պետական բյուջեի մշակման և կատարման մեջ 2020 թվականին իրականացված իր կանաչ բյուջեի միջոցով, Ֆրանսիայում կանաչ բյուջեի ընդունման հիմքում ընկած գործընթացները, մեթոդաբանությունները և օրենսդրական շրջանակները,

ներառյալ պետական ծախսերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, հաշվետվության մեխանիզմները, որոնք օգտագործվում են Ֆրանսիայում՝ ապահովելու բնապահպանական ծախսերի թափանցիկությունն ու արդյունավետությունը, կանաչ պարտատոմսերի թողարկման ֆրանսիական պրակտիկայից, ներառյալ կարգավորող շրջանակի ձևավորումը, կանաչ նախագծերի դասակարգումը և իրավասության չափանիշները, թե ինչպես է Ֆրանսիան մոբիլիզացնում պետական և մասնավոր ներդրողներին՝ ֆինանսավորելու կանաչ ծրագրերը՝ հիմնված հարկաբյուջետային և կարգավորիչ խթանների վրա, կանաչ պարտատոմսերի հետ կապված հաշվետվությունների և աուդիտի գործընթացները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող նախագծերի համար միջոցների օգտագործումը, ինչպես նաև քննարկվել են ֆրանսիական փորձի Հայաստանում կիրառման հնարավորությունները և տարբերակները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցելության ընթացքում ֆրանսիական փորձին վերաբերող քննարկված թեմաները հնարավորություն են տալիս գնահատել Հայաստանում կիրառելու հնարավորությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

22 հոկտեմբերի 2024թ

Հայկուհի Կամենդատյան